

## ԵՐԿԻՐ ՆԱԽԻՒԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

### Նա աշխարհի մեջ մեր փայլ սպեշ մեր արքայազան լեզուին

1920 թվականի հունվարի 7-ին Օրենբուրգում իր մահկանացուն կնքեց աշխարհը, սիրո և թախծի մեծանուն երգիչ Վահան Տերյանը:


1920-ին, այսինքն 100 տարի առաջ: Եվ մենք Հայաստանում անգամ չիլիզեցինք այդ մասին: Դե մեր իշխանությունները պատերազմ են հայտարարել մեր պատմության, մեր մշակույթի, մեր եկեղեցու և ինքնության դեմ, ինչու պիտի ինչեմ են Տերյանին, նրան, ում Պարույր Սևակի մեծարմամբ «...ազնիվ մետաղի պես փայլ տվեց մեր արքայական լեզվին, հարստացրեց մեր ազգային քնարերգությունը» և մնաց որպես հայ գրականության Պառ-

նասի հավիտենական բնակիչ: Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո բանաստեղծը ժողովրդի խորհրդին է ներկայացնում Թուրքահայաստանի մասին զեկուցագիրը և Հայաստանի մասին դեկրետի նախագիծը:

Այս առիթով հանդիպումներ է ունենում հեղափոխության առաջնորդի հետ և դեկտեմբերին նշանակվում Հայկական գործերի կոմիսարիատի նախագահի տեղակալ: 1918 թ. մասնակցում է Բրեստ-Լիտովսկում կայացած հաշտության բանակցություններին՝ որպես սովետական պատվիրակության խորհրդակալ:

1919-ին արտաքին գործերի կոմիսարիատի շտապ գաղտնի հանձնարարությանը մեկնում է Տաշքենդ: Մինչ օրս անհայտ է այդ ուղևորության բուն նպատակը: Ինչպես նշում են տերյանագետները, ենթադրություններ կան, որ բանաստեղծը Հայկական հարցի շուրջ ընդհարվել է Լենինի հետ, և նրան ուղղակի հեռացրել են Մոսկվայից:

1919 թ. Սամարայում գրում է իր վերջին «Գինով եմ, գինով եմ ես էլ» բանաստեղծությունը: Առողջական վիճակը ծայրահեղ վատանում է Օրենբուրգում, որտեղ էլ 1920 թ. հունվարի 7-ին վախճանվում է:



#### անկենդան դիակի համար:

Ահա այսպիսի մի ներքին հավատ, մի խոր գիտակցություն է հարկավոր հայ մտավորականությանը: Հարկավոր է, եթե նա իրավ սիրում է մեր ժողովուրդը, մեր երկիրը: Իսկ երբ դա լինի, ես հավատում եմ՝ կլինի և Հոգևոր Հայաստանը, կենդանի կլինի մեր հայրենիքը: Ուրեմն կենդանի կլինի և այն Հայաստանը, որի համար մեր ժողովուրդը այսօր թափում է իր արյունը...»:

«Չպետք է մատնանիչ անել արտաքին արգելքներն ու խոչընդոտները, դրանք միշտ կան, և դրանց դեմ, այո, պետք է կռվել: Բայց նախ պետք է ներքին կամք, ներքին հավատ, անխախտ գիտակցություն: Առանց այդ՝ ավելորդ է և արտաքին արգելքների դեմ կռվելը, ավելորդ է այդ պատմեղները ջնջելը, քանի որ երբ ընկնեն այդ պատմեղները, հանկարծ պիտի տեսնեք դուք, զուր էին ձեր ջանքերը, ձեր զոհաբերումները, ձեր կռիվը՝ այդ բոլորը արել էք մի

## ՄԻ՛ ԽԱՌՆԵՔ ՄԵՋ ՁԵՐ ՎԱՅՐԻ ՑԵՂԵՐԻՆ

Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի ցեղերին, Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է և հին: Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ծյուն, Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն: Բարեկուն է եղել մեր փայտանը, տես՝ Անհետ կորել, անցել է չար մշուշի պես: Ասորիքն է եղել մեր թշնամին - ահա՛

Դաշտ է տեղը և չկա քար քարի վրա: Ամրակուռ է մեր հոգին - դարերի զավակ Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ: Շատ է տեսել երկիրն իմ ցավ ու արհավիրք, Լաց է այնտեղ ամեն երգ և ողբ՝ ամեն գիրք: Գերված ենք մենք, ո՛չ ստրուկ - գերված մի արծիվ, Չարության դեմ վեհսիրտ միշտ, վատի դեմ ազնիվ:

Բարբարոսներ շատ կզան ու կանցնեն անհետ, Արքայական խոսքը մեր կմնա հավետ: Չի հասկանա ձեր հոգին և ծուլ, և օտար, Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար: Եզիպտական բուրգերը փոշի կդառնան, Արևի պես, երկիր իմ, կվառվես վառման: Որպես փյունիկ կրակից կելնես նոր Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր: Արիացիր, սիրտ իմ, ե՛լ հավատով տոկուն, Կանգնիր հպարտ որպես լույս լեռն է մեր կանգուն:

## ՀՀ ԳԱԱ-ում կայացավ Մոսկովյան պայմանագրի 100-ամյակին նվիրված կլոր սեղան

Սույն թվականի մարտի 18-ին հայ և ռուս պատմաբանները քննարկեցին 1921 թ. մարտի 16-ին ստորագրված Մոսկովյան պայմանագիրը: Քննարկումը կայացավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում անցկացված Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ խորհրդային Հանրապետության (ՌՍՖՍՀ) և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ներկայացուցիչների միջև 1921 թվականի մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված պայմանագրի 100-ամյակին նվիրված կլոր սեղանի ժամանակ:



Մոսկովյան պայմանագրով Ռուսաստանը ճանաչեց Թուրքիայի ինքնիշխանությունը Ազգային մեծ ուխտի՝ թուրքական ճանաչած բոլոր տարածքների նկատմամբ: Թուրքիան իր հերթին հրաժարվեց Բաթումիից՝ փոխարենը ստանալով Սուրմալուի գավառը: Պայմանագրով հաստատվեց Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանը, որը գործում է առ այսօր: Ազգությունների այն ժամանակվա կոմիսար Իոսիֆ Ստալինի ջանքերի շնորհիվ արտագործող կոմ Գեորգի Չիչերինը, ով բանակցություններում ներկայացնում էր ՌՍՖՍՀ շահերը, հրաժարվեց մինչ այդ ունեցած հայամասսու իր դիրքորոշումից: Նա հայտարարեց, որ իրենք չեն պնդի սահմանը Արփաչայից արևմուտք և Արաքսից հարավ անցկացնելու: Այդպիսով, Թուրքիային անցան ոչ միայն ամբողջ Կարսի մարզը, այլև Սուրմալուի գավառը, որը երբեք չէր եղել Թուրքիայի կազմում: Սակայն թուրքական պատվիրակությունը

չբավարարվեց այդքանով և պահանջեց, որպեսզի Նախիջևանի մարզը չմնա Հայաստանին, այլ դրվի Ադրբեյջանի հովանավորության տակ, վերջինս էլ պետք է պարտավորվեր ապագայում չզիջել այդ հովանավորությունը որևէ երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին: Ի վերջո, 1921թ. մարտի 16-ին կողմերը կնքեցին ՌՍՖՍՀ-Թուրքիա «ընկերության և եղբայրության պայմանագիրը», ինչպես նշված է պայմանագրի նախաբանում, ինչը խիստ անբարենպաստ էր Հայաստանի համար: «Այս պայմանագրի 100-ամյակին մենք ակնկալում ենք լսել մեր ռուս գործընկերների մոտեցումը: Ես հույս ունեմ, որ այս կլոր սեղանի ժամանակ մենք կկարողանանք պատասխանել հետևյալ հարցերին, թե արդյոք կա՞ն պատմական զուգահեռներ 1920 և 2020 թվականների միջև, ինչպես նաև խորհրդա-թուրքական պայմանագրի կնքումն արդյոք ունի ընդհանրու-

յուններ 2020 թվականին ստորագրված եռակողմ հայտարարության հետ», - իր ելույթում, մասնավորապես, ասաց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մեյրնյանը: Իր հերթին Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը նշեց. «Մենք լսում ենք ոչ պրոֆեսիոնալների տեսակետները և պարտադիր վառ արտահայտված քաղաքական ակցենտով այս կամ այն կազմակերպության կողմից: Այս միջոցառման բացառիկ արժեքն այն է, որ այսօր կլոր սեղանի շուրջ հավաքվել են մասնագետներ, որոնք, իդեպ, չունեն միանշանակ տեսակետ և այս հարցին կնոտենան զուտ մասնագիտորեն»: Կլոր սեղանին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ ԳԱԱ հայագիտության

և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, Յուրի Սուվարյանը, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը, ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մեյրնյանը, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, Ռուսաստանի Դաշնությունից «Միջազգային վերլուծություն» ամսագրի գլխավոր խմբագիր Սերգեյ Մարկեդոնովը, պատմական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Կռիլովը, հետխորհրդային հետազոտությունների փորձագետ Վադիմ Մուխամեդովը, Ուրալի Դաշնային համալսարանի «Պատմության ֆակուլտետ» դեպարտամենտի տնօրեն Ալեքսանդր Պալկինը, Ուրալի Դաշնային համալսարանի Ռուսաստանի պատմության ամբիոնի վարիչ Սերգեյ Սոկոլովը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Արման Եղիազարյանը, Կարեն Խաչատրյանը, Արմեն Մարուքյանը, Ռուբեն Մեյրնյանը, Էդիկ Միմասյանը, Գևորգ Ստեփանյանը, Խաչատուր Ստեփանյանը, Աշոտ Փիլիպոսյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Հովհաննիսյանը, պատմական գիտությունների դոկտորներ Ռուբեն Սահակյանը, Ամատունի Վիրաբյանը, դոցենտ Եղգար Հովհաննիսյանը: Կլոր սեղանի կազմակերպիչներն էին ԳԱԱ պատմության ինստիտուտը և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Հայաստանը 1920-1991 թվականներին» գիտական լաբորատորիան: **ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**



(DRC, University of Delaware, USA):
Պարաբարյան պատերազմի տարիներին
նա բազմաթիվ սոցիոլոգիական հետազո-

կան գիտությունը, ինչպես նաև հանրային
կարծիքի սոցիոլոգիական հարցումների քա-

«Социологический журнал», «Вопросы
философии», «Мониторинг обществен-

Գ. Պողոսյանը մշտապես մեծ ուշադրու-
թյուն է հատկացրել երիտասարդ մասնագետ-

1992-1994 թթ. եղել է ՀՀ նախագահին
կից գիտության և տեխնիկայի հասարակա-

Նրա գործունեությունը՝ որպես գիտնա-
կանի և գիտության կազմակերպիչ, բարձր

Ավադեմիկոս Գ. Ա. Պողոսյանը ճանաչ-
ված ու սիրված գիտնական է ոչ միայն ակա-

Ո. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ
Յու. Մ. ՄՈՒՎԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասա-

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՍՈՑԻՈԼՈԳԻ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

Լրացավ անվանի սոցիոլոգ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի գիտական ղեկավար, Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի
նախագահ, ակադեմիկոս Գևորգ Արամի Պողոսյանի 70 տարին

Գևորգ Արամի Պողոսյանը ծնվել է 1950
թ. Երևան քաղաքում: 1968 թ. ավարտել է

արատավոր, երկրի անվտանգությանը
սպառնացող երևույթ: (Gevorg Poghosyan.

Նրա ղեկավարությամբ պատրաստվել
են ՀՀ-ն ներկայացնող մի քանի գիտական

1990թ. նա հիմնադրել է ինքնուրույն Հայ-
կական սոցիոլոգիական ասոցիացիան

Գ. Պողոսյանը ավելի քան 40 տարինե-
րի գիտականակերպչական գործունեու-

Բազմամյա գործունեության շնորհիվ
նրան հաջողվեց մեր երկրում հաստատել ու

ձեռնությամբ մշտական ատլիսները, հար-
ցազրույցները, մամուլում հոդվածները, ե-

Գ. Պողոսյանը ավելի քան 40 տարինե-
րի գիտականակերպչական գործունեու-

Ավադեմիկոս Գ. Պողոսյանը ընտրվել է
բազմաթիվ միջազգային մասնագիտական

Արսեն Առաքելյանը վերընտրվեց ՀՀ ԳԱԱ մոլեկուլային
կենսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում

կենսաբանության ինստիտուտի
2021-2025 թթ. զարգացման ուղ-

Արսեն Առաքելյանը ընտրվել է
1979 թ.-ին՝ Երևանում: Ավարտել է

Սույն թվականի մարտի 3-ին
ՀՀ ԳԱԱ նախագահությունը ՀՀ



# Լեվ ԳՈՒՄԻԼՅՈՎԻ ՀԱՆՐԱՊԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

2019-ի հուլիսին հրավիրված էի Եվրասիական Միության մայրաքաղաքների գրողների ու գրականագետների միջազգային ֆորումին, որին մասնակցում էին 20 տարբեր երկրների ներկայացուցիչներ: Ֆորումը տեղի էր ունենում Ղազախստանի Նուրսուլթան մայրաքաղաքում: Այդ քաղաքում է գտնվում Լև Գումիլյովի անվան միջազգային համալսարանը, որի գիտական խորհրդի հետ տեղի ունեցավ ֆորումի մասնակիցների հանդիպումը: Համալսարանը տպավորիչ էր իր պատմական թանգարանով, նաև տեխնիկական հագեցվածությամբ: Մեզ նվիրեցին գրքեր, դրանցից մեկը մեծադիր հատոր էր (805 էջ) և կոչվում էր «Лев Гумилев Энциклопедия»:

Լև Գումիլյովը ուսուցանում էր բանաստեղծների՝ Աննա Ախմատովայի և Նիկոլայ Գումիլյովի որդին է: Նա պատմաբան էր, աշխարհագրագետ: Նշանավոր գիտնական էր, որը երեք անգամ արքայազն էր, սակայն Ստալինի մահվանից հետո արդարացի էր և զբաղվել է գիտությամբ, խորացել թուրքական, մոնղոլական լեզվաբանությանը պատկանող ժողովուրդների պատմության խնդիրներում: «Լև Գումիլյով հանրագիտարանի» երկրորդ հրատարակումը իրականացրել է Մոսկվայի «Խուդոժեստվեննայա լիտերատուրա» հրատարակչությունը 2017 թվականին: Այդ հատորը նվիրված է Եվրասիական Միության գաղափարի հեղինակ Ն. Նազարբակին: Հանրագիտարանի վերջում դրված է Լև Գումիլյովի երկու «Ինքնակենսագրականները», որոնք մագնիտաֆոնային ձայնագրություններ են արված 1986 և 1987 թթ.:

Գումիլյովը ծնվել է 1912-ին և վախճանվել 1992-ին: Տիրապետել է մի շարք լեզուների: Հայտնի են նրա «Деяние монголов», «Тысячелетие вокруг Каспия», «Древняя Русь и Великая

Степь» աշխատությունները: «Լև Գումիլյով հանրագիտարանը» կազմել են նրա գիտական ժառանգության հիման վրա, և բնականաբար նրանում շեշտը դրվում է հատկապես թուրքալեզու ժողովուրդներին ներկայացնելու միտումը: Ամենավաղ չեն նաև համաշխարհային հռչակ ունեցող դեմքերն ու դեպքերը:

Բնականաբար ինձ հետաքրքրեց, թե ինչ կար այդ հանրագիտարանում հայերի և հայագիտությանը զբաղված գիտնականների մասին: Ներկայացնում են իմ դիտարկումները: 452-րդ էջում հոդված կա Մովսես Խորենացու մասին, որը ծնվել է 370/407 և վախճանվել 487/492 թթ., նշանավոր հայ գրող է, հեղինակ է հանրահայտ «Հայոց պատմության», որին Գումիլյովը անդրադարձել է հաճախ: 350-րդ էջում Կիրակոս Գանձակեցին է (մոտ. 1200-1271), հայ պատմիչ: Մոնղոլների մոտ եղել է գերի: Իր աշխատություններում նկարագրել է մոնղոլների կողմից Հայաստանը գրավելու մասին, հատկապես Ջալալեդդին խորեզմեցու արշավանքները և այլն: Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը» սկսվում է IV դարից և ավարտվում 1265 թվականով: Հայերեն է հրատարակվել 1961 թվականին: Գումիլյովը շատ հաճախ է անդրադարձել Գանձակեցու պատմությանը և կատարել մեջբերումներ:

691-րդ էջում հոդված կա Փավստոս Բուզանդին նվիրված: Բուզանդը IV-V դարերի հայ պատմիչ է, V դարում գրել է պատմավիպական մի երկ, որը կոչվում է «Հայոց պատմություն», որում պատկերվում են մինչև մեր թվագրության 987 թվականը տեղի ունեցած դեպքերը: Գումիլյովը անդրադարձ է կատարել այդ աշխատության փաստերին:

Հայերից, որոնց անդրադարձել է Գումիլյովը, էղուարդ Վռամի Թադևոսյանն է (ծնվ. 1928 թ.) փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, որն ազգային հարաբերություններին վերաբերող աշ-

խատություններ ունի՝ «Խորհրդային ազգային պետականությունը» (Մ., 1972), «Խորհրդային պետությունը և ազգային հարցը» (Մ., 1989): Թադևոսյանի ամուսնը հանդիպում է Գումիլյովի աշխատություններում:

Առանձին հոդվածներ են նվիրված Հայաստանին և հայերին (էջ 61): Հայաստան, Հայաստանի Հանրապետություն-Անդրկովկասի պետություն: Մայրաքաղաքը՝ Երևան: Բնակչության թիվը - 3,2 միլիոն բնակիչ (2011): Հայաստանը որպես պետություն ստեղծվել է մեր թվագրությունից առաջ 600 թվականին: Հայաստան անվանումը հաճախ է հանդիպում Գումիլյովի աշխատություններում:

Հայեր հոդվածում կարդում ենք. «Լեզուն հայերենն է, պատկանում է հնդեվրոպական լեզուների ընտանիքին: Հայերը Հայաստանում 3 միլիոն են, աշխարհում՝ 12-14 միլիոն»:

Հայեր հոդվածում բերվում է Գումիլյովի հարցազրույցը տրված «Молодежь Якутии» թերթին 1989-ի մարտի 30-ին: Ըստ դրա, հայերի ծագման մասին կան երկու տեսակետներ: Մեկը եկվոր-խառնածին տեսակետն է, մյուսը, որն ընդունում են հայերը, հայասա տարբեր ցեղերից առաջացած պետությունն է, որը Հայկական լեռնաշխարհում ապրել է հնագույն, անհիշելի ժամանակներից: Գումիլյովը հիշեցրել է, որ հայերի հետ խառնվել են արաբները, սելջուկները, օսմանցիները, պարսիկները, հռոմեացիները, հույները, ռուսները: Եղել են պատերազմներ, զինվորները բռնաբարել են կանանց: Դա եղել է զանգվածային երևույթ: Չգիտես ինչու, ընդունված չէ և անհարմար է դրա մասին խոսել: Արդյունքում բոլոր հին ժողովուրդների մոտ առաջացել է էթնիկ փոփոխություն: Հայերը, հրեաները, կորեացիները էթնիկորեն փոխվել են չնայած մնացել են նրանց մշակութային ավանդույթները:

153-րդ էջում Բյուզանդիա պետությունն է, որում ասվում է, թե Բյուզանդիայի մայրաքաղաքի կյանքում հայերը հետադարձաբար մասնակցել են երկրի կյանքին: Բառացի ասվում է. «Գումիլյովի կարծիքով Մակեդոնյան դինաստիայի դերը Բյուզանդիայում նշանակալից էր: Այն վերականգնել է Բյուզանդիայի սահմանները դեպի Եփրատ ու Դանուբ, բարձրացրել Կոստանդնուպոլսի տնտեսությունն ու մշակույթը և տարածել երկրի փառքը ողջ աշխարհում: Եվ, ամենակարևորը, նրան հաջողվել է բյուզանդացի դարձնել բազում սլավոնների և փոքրասիացիների, որի հետևանքով բյուզանդացի ազգը դարձավ առավել միատարր և նվազ բազմաբղետ»: Անշուշտ, Լև Գումիլյովը գիտեր, որ Բյուզանդիայի Մակեդոնյան դինաստիան (867-1056) հայկական է, սակայն այդ մասին ոչինչ չեն գրել հանրագիտարանի մե-

թոյն ստեղծողները: Եվ այն դեպքում, երբ այդ մասին գրված է բազմաթիվ ռուսալեզու հանրագիտարաններում:

Կիլիկիա հոդվածում գրված է, թե Գումիլյովը մեծ ուշադրություն է դարձրել Կիլիկիայի պատմությանը (էջ 349), քանի որ նրա տարածքում մ.թ.ա. եղել են մի քանի անկախ թագավորություններ: Սակայն ոչինչ չի ասվում Կիլիկիայի հայկական թագավորության մասին, որը, անշուշտ, ծանոթ էր Գումիլյովին, եթե նա գրում էր Թուրքիայի պատմությունը:

Հետաքրքիր է, որ նշանավոր հայագետներ Ն. Մառը և Մ. Բրոսսեն, որոնք կան հանրագիտարանում, նույնպես անտեսված են իրենց հայագիտական հզոր գործունեությանը:

Նիկողայոս Մառի մասին գրված է 425-րդ էջում, ուր նշված է, թե եղել է արևելագետ, կովկասագետ, բանասեր, պատմաբան, ազգագրագետ, հնագետ: Գումիլյովը նրա աշխատություններին անդրադարձել է և մեջբերումներ կատարել: Բոլորին է հայտնի, որ Մառի հնագիտական պեղումների գագաթը եղել է հայ Բագրատունիների մայրաքաղաք Անին, որի մասին ունի կոթողային «Անի» աշխատությունը, և անհնար էր, որ Գումիլյովը այդ մասին չիմաստար: Ի դեպ, Ն. Մառի մահվան թվականը նշված է 1964-ը, մինչդեռ նա վախճանվել է 1934-ին:

121-րդ էջում հոդված կա նվիրված նշանավոր հայագետ, վրացագետ Սարի Բրոսսեին (1802-1880), որի կարևոր աշխատությունը համարվում է 1851-ին լույս տեսած դեպի Վրաստան ու Հայաստան կատարած ճանփորդության նկարագիրը: Մինչդեռ Բրոսսեն հայտնի է նրանով, որ ֆրանսերեն է թարգմանել 13 հայ պատմիչների գործեր, այդ թվում Կիրակոս Գանձակեցիի, Առաքել Դավիթեցիի, Ստեփանոս Օրբելյանի, Մաղաքիա Աբեղա, Եսայի Հասան Ջալալյանց, որոնց երկերում մեծաքանակ նյութ կա Գումիլյովի պատմական հետաքրքրությունների վերաբերյալ:

Էջ 606-607-ում է գետնդված «Սելջուկներ» հոդվածը, որում ասվում է, թե նրանք XI դարի 40-80-ական թվականներին գրավել են Միջին Ասիայի և Իրանի մի մասը, Ատրպատականը, Քուրդիստանը, Իրաքը, Հայաստանը, Փոքր Ասիան, Վրաստանը և այլ տարածքներ: Սա գոնե համահունչ է եվրոպական գիտական հանրագիտարաններին, որոնք հաղորդում են, թե թուրքական ցեղերը Մեծ Հայքում հայտնվել են XI դարում:

63-րդ էջում հոդված կա նվիրված Արթուրյան Սերգեյ Ալեքսանդրովիչին, որը ռուսական մարդաբան է, պատմական գիտությունների դոկտոր և 1990-ից Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ: Նրա աշխատություններին Գումիլյովը հաճախ է անդրադարձել:

«Լև Գումիլյով հանրագիտարան» հատորում կան աշխարհի տարբեր ազգերին վերաբերող բազմաթիվ նյութեր: Կազմողները շեշտը դրել են հատկապես թուրքալեզու ժողովուրդների փաստերի վրա:



Ալեխա ԴՈՒՈՒՄՅԱՆ

## Ա. ԹՈՓՉՅԱՆԻ «ԲԱՆԿ ՕՏՈՄԱՆ» ՎԵՂԸ ԼԱՏՎԻԵՐԵՆ

«Zelta Rudens Printing» հրատարակչությունը Ռիգայում լույս է ընծայել հայ գրող, թատերագիր և գրականագետ Ալեքսանդր Թոփչյանի «Բանկ Օտոման» (Aleksandrs Topšijans, «Osma u banka») վեպը: Անդրիս Չենիսը վեպի լատվիերեն թարգմանությունը կատարել է ռուսերեն հեղինակային թարգմանությունից: Թարգմանության նախածեռնողներից է արծակագիր և լրագրող Ալեքսանդր Գերոնյանը, որը Լատվիայում հրատարակում է «Արարատ» թերթը և «Կռուկ» հանդեսը, լատվիացիներին ներկայացնում հայ մշակույթի լավագույն նմուշները: Գրքի հրատարակությանը աջակցել են Հայաստանի մշակույթի նախարարու-

թյունը և լատվիացի հովանավորները: Վեպը ներկայացնում է 1896 թվականի օգոստոսին հայ հեղափոխականների կողմից Պոլսի պետական բանկի գրավման

դրամատիկ պատմությունը: Գործողությունը զուտ քաղաքական բնույթ ունի. այս հուսահատ քայլով հանդուգն երիտասարդները ցանկանում էին համաշխարհային հանրության ու-



շաղրությունը հրավիրել Հայկական հարցի, արյունոտ սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի օրոք տեղի ունեցող բռնությունների և զանգվածային կոտորածների վրա:

Երեք տասնյակ զինված անձինք՝ Արմեն Գարոյի և Բաբկեն Սյունու զլխավորությամբ գրավեցին մի բանկ, որը շատ աշխատակիցներ ուներ Բրիտանական կայսրությունից և Ֆրանսիայից: Գործողությունը տևեց շուրջ 14 ժամ: Ջիմյալները պահանջում էին Արևմտյան Հայաստանում քաղաքական բարեփոխումներ իրականացնել: Հաջորդ առավոտյան նրանք Կոստանդնուպոլսում մեծ տերությունների դեսպանների միջամտությամբ և Ռուսաստանի դեսպանության ներկայացուցչի երաշխավորու-

թյամբ լքեցին բանկը ու ֆրանսիական շոգենավով մեկնեցին Մարսել...

Ա. Թոփչյանի վեպն առաջին անգամ հրատարակվել է 2008 թվականին՝ Երևանում: Այնուհետև թարգմանվել է մի շարք լեզուներով՝ ֆրանսերեն, ռուսերեն, պարսկերեն, սերբերեն և ռումիներեն, որը մեր գրական իրականության մեջ բացառիկ երևույթ է: Երկար տարիներ Փարիզում բնակվող Ալեքսանդր Թոփչյանը ծանոթանում է նաև Լատվիայում. մասնավորապես, նրան է նվիրված լատվիացի բանաստեղծ Մարիս Չակալայի հայտնի բանաստեղծություններից մեկը՝ «Գրված արցախյան գոյամարտի օրերին» «Երբ սպանում են եղբորդ հեռվում»:

Աշոտ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՀԵՏ ԲՅՈՒՐԱԿԱՆՈՒՄ

(7 ապրիլի, 1978 թիվ)

Մենք հանդիպեցինք Վիկտոր Համբարձումյանի հետ Բյուրականի նրա առանձնատան շքանուշերին: Վերջին անգամ ես նրան տեսել էի 1975 թվի հոկտեմբերին: Անցել էր 3 տարի մեր վերջին հանդիպումից Գյումրիում, Վարպետի ծննդյան 100-ամյակի օրերին: Վիկտոր Համազասպովիչը բավական փոխվել էր, կարծես ավելի տարիքով էր երևում, այքի էին զարմում հատկապես նրա ակնոցները, որոնք քիչ-ինչ անբնական խոշորացնում էին նրա աչքերը: Մենք երեքով էինք՝ ՀԳԱ հիմնադրող գրադարանի տնօրեն, պրոֆեսոր Գուրգեն Հովհաննիսյանը, հայրս՝ Վիգեն Ավետիքովիչը, մեր հետ էր նաև ակադեմիայի աստղադիտարանի փոխտնօրեն Լյուդվիգ Միրզոյանը, որը և ասաց, թե մենք եկել ենք տեսության մեծարժեք պրեզիդենտին և բերել ենք Ավետիք Իսահակյանի երկերի վեցհատորյակի տպագրված հինգ հատորները: Համբարձումյանը քիչ շփոթված նայեց մեզ և ապա յուրաքանչյուրիս ձեռքը սեղմեց և Վիգեն Ավետիքովիչին հարցրեց. «Ինչպե՞ս եք: Ես վաղուց Ձեզ չեմ տեսել»: Ապա ասաց, թե ինքը մի հինգ-տասը ռուպեից կգա և հրավիրեց մեզ վեր բարձրանալ և սպասել իրեն:

Մեծ սենյակում պատից կախված էր Համազասպ Համբարձումյանի դիմանկարը՝ գործ՝ Ս. Սարյանի: Լ. Միրզոյանը մեզ ուղեկցեց ակադեմիկոսի աշխատասենյակ: Երբ մտանք առանձնասենյակ, Համբարձումյանը ոտքի վրա էր, մեղմ ու ջերմ ժպիտով առաջարկեց նստել գրասեղանի դիմացի ձախ անկյան՝ փոքր սեղանի շուրջ, ուր չորս բազկաթոռ էր դրված, կլոր սեղան, մի փոքր ծաղկաման՝ չորս նարգիզներով:

Մինչև որ բոլորը չնստեցին, ինքը ոտքի վրա էր: Հովհաննիսյանը ասաց, որ բերել ենք Վարպետի գրքերը: Ես պայուսակից հանցի և մեկնեցի ակադեմիկոսին, նախ՝ Իսահակյանի ռուսերեն թարգմանությամբ բանաստեղծությունների փոքրիկ՝ մինիատյուր գրքույկը հետյալ



մակագրությամբ՝ «Մեծարժեք Վ. Հ. Համբարձումյանին, Վարպետի հին ու սիրելի բարեկամին-Ավիկ Իսահակյան» ընծայագրով և ապա հինգ հատորները, որոնք տպագրվել էին 1973-1977 թթ.: Առաջին հատորը մակագրել էի՝ «Հայ ժողովրդի համձարեղ զավակ Վիկտոր Համբարձումյանին, բարի հիշատակ Ավ. Իսահակյանի ընտանիքից»:

Նայեց փոքր հատորիկը, ապա ուղղվեց Հովհաննիսյանին - «Սա երևի Ձեր գործերից է, շատ գեղեցիկ է», ծանոթացավ նվիրատվությանը: «Գիտեմ, Դուք սիրում եք տպագրել փոքրիկ, հուշանվերային գրքեր: Իսահակյան

յան, ռուսերեն լեզվով շատ հետաքրքիր է: Անցյալներում Թումանյանն էլ էիք ինձ նվիրել, այնտեղ «Անուշն» էլ կար, շատ եմ սիրում այդ պոեմը ինչպես և Վարպետի «Ալագյազի մանիները»: Ես ասացի - «Այստեղ բավական թվով հատվածներ կան և «Ալագյազի մանիները», այս գիրքը տպագրվել է Միսկուն, գերագանց արված ռուսերեն թարգմանություններ կան՝ Բլոկ, Բրյուսով, Ախմատովա..

Վիկտոր Համազասպովիչն ասաց. «Իմ կարծիքը թարգմանական արվեստի մասին եթե ուզում եք իմանալ, մտածում եմ, որ մի մեծ բանաստեղծ, ա-

5

## JEOL-JCM-7000 ՄԱՆՐԱԳԻՏԱԿ. ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ՈՒՈՐՏՆԵՐՈՒՄ

2018 թվականից ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնը և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնը իրականացնում են «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն) կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» երազմուս+ կարողությունների զարգացման ծրագիրը՝ միտված շրջակա միջավայրի պաշտպանության (բնապահպանության) ոլորտում Հայաստանում և Վրաստանում կրթական ծրագրերի որակի բարելավմանը, առարկայական ծրագրերի բազմակողմանի արդիականացման ապահովմանը՝ հիմք ընդունելով Բոլոնիայի և ԵՀԱ-ի (Եվրոպական համալսարանների ասոցիացիա) Ջալցբուրգյան սկզբունքները, ինչպես նաև Եվրոպական լավագույն փորձը՝ ներառյալ կրթական տեխնոլոգիաների վերջին նորարարությունները:


Բնապահպանական կրթությունն արդիականացնելու նպատակով ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում, որը տեղակայված է ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնում, ստեղծվում է միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական եզակի լաբորատորիա, որտեղ իրականացվելու են ու-

սանողական, արտաքին շահառուների հետ համագործակցային տարբեր նախագծեր: Բնապահպանության ոլորտում միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական լաբորատորիայի ստեղծումը ծրագրի հիմնական շոշափելի արդյունքներից է, որը էականորեն կբարելավի հետազոտական կրթության որակի չափանիշները: Ավելի լաբորատորիան հասանելի կդարձնի ժամանակակից լաբորատորիայի ենթակառուցվածքները և հնարավորություն կտա համալսարանների և արտաքին շահառուների միջև իրականացնելու տարբեր նախագծեր:

Ծրագրի իրականացման առաջին տարում ձեռք է բերվել ճապոնական «JEOL» ընկերության արտադրության «JEOL-JCM-7000 NeoScope» մոդելի տեսածրող էլեկտրոնային մանրադիտակ: Մանրադիտակի հետ միաժամանակ ձեռք է բերվել նմուշը ոսկեպատող սարք, որը հնարավորություն է տալիս հետազոտելու նաև կենսաբանական նմուշներ:

Մանրադիտակը նմուշի մակերևույթը տեսածրում է էլեկտրոնների կենտրոնացված ճառագայթի ուղղորդմամբ: Այն նմուշների ձևաբանական, տեղագրական առանձնահատկությունների և քիմիական բաղադրության հետազոտման հզոր միջոց է: JEOL-JCM-7000 NeoScope մանրադիտակը հնարավորություն է տալիս մեծացնելու նմուշի պատկերը 100000 անգամ, որոշելու մասնիկների չափերը: Մանրադիտակը հնարավորություն ունի միաժամանակ որոշելու նմուշում առկա 40 տարրի պարունակություն և ստանալու ընտրված հատվածի առանձին տարրերի պարունակությունների բաշխման քարտեզներ:

Տեսածրող էլեկտրոնային մանրադիտակը կիրառվում է 1965-ից: Տարիների ընթացքում այն կատարելագործվել է կիրառվել է ամենատարբեր ոլորտներում: JEOL JCM-7000-ի կիրառման հնարավորությունները թեև փոքր-ինչ սահմանափակվում են՝ կապված այն հանգամանքի հետ, որ նրանով կարելի է հետազոտել միայն չոր նյութ, այնուամենայնիվ մանրադիտակն ունի կիրառության բազմաթիվ ոլորտներ՝ շրջակա միջավայր, նյութագիտություն, բրուտագործություն, մանուտեխնոլոգիա, երկրաբանություն, սննդագիտություն և այլն: Շրջակա միջավայրին և երկրաքիմային վերաբերող ուսումնասիրություններում մանրադիտակը հնարավորություն է տալիս նմուշներում իրականացնելու տարրերի որակական և քանակական վերլուծություն:




Pyrus communis  
ՏԱՆՁԵՆ  
ED 15.0 kV WD 12.0 mm Std.-PC HighVac. 3,000  
TR 2339 04 Feb 2021 5 μm

Մանրադիտակը կարող է հիանալի գործիք լինել սննդագետների համար սննդի որակի գնահատման և մթերքների արտադրման գործընթացում: Այն կարելի է կիրառել է չոր սնունդը, փոշիացված մթերքների միկրոկառուցվածքային բնութագրերն ուսումնասիրելիս: Կենսաբժշկական հետազոտություններում մանրադիտակը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու դեղորայքի, գեղարար նյութերի քիմիական բաղադրությունը, դրանց համասեռությունը, ինչպես նաև նյութերի ազդեցությունը մաշկի վրա: Տեքստիլ արդյունաբերության մեջ այն հնարավորություն է տալիս բացահայտելու մանրաթելի քիմիական բաղադրությունը, կառուցվածքը, տեսակը, ամրությունը, առաձգականությունը:

Տեսածրող էլեկտրոնային մանրադիտակը լայնորեն օգտագործվում է այլ սարքավորումների հետ միասին՝ ընդարձակելով հետազոտությունների իրականացման շրջանակները:

Նաիրուհի ՄԱՂԱՔՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժնի գիտաշխատող



Crocus adamii  
ԲՐԱՌՆ ՍԱՄԻ

# ՀԱՆԳԻՒՊՈՒՄ...

➤4 սենք Լերմոնտովը, երբ թարգմանում է Բայրոնի՝ «Душа моя обьята тьмой» բանաստեղծությունը և ասաց անգլերեն «The soul is dark» (հիանալի առոգանությամբ), նա գտնում է այդ գործը իրեն շատ մոտ ու հարազատ, և այն ռեզոնանս է առաջացնում իր հոգում: Եվ եթե ինքն այն չթարգմանի, չի կարողանա ասես ասարել և նա որոշում է անպայման թարգմանել այն և թարգմանել ոչ թե զբաղմունքի համար, կամ հոնորարի, այլ իր ներքին մղումի: Ահա այդպես, ինձ թվում է նաև, որ թարգմանիչը պիտի անպայման իմանա բնագրի լեզուն, ինչպես Լերմոնտովն իմացել է և՛ անգլերեն, և՛ գերմաներեն Գյոթե թարգմանելիս: Կամ թե Իսահակյանն ու Թումանյանը իմացել են ռուսերեն Պուշկին կամ Լերմոնտով թարգմանելիս: Եվ ոչ թե, ասենք, Ախմատովան, որը հիանալի բանաստեղծ է, որին ինքն էլ շատ է սիրում, սակայն վերցնում է տողացի թարգմանությունը և փորձում է այն իր շկուլային, իր ոճին հարմարեցնել, որը տվյալ դեպքում շատ է ռուսական և համահունչ չէ բնագրին կամ թույլ է ստացվում:

Վիկտոր Զամազասպովիչը բերեց օրինակ, որ ռուսաց գրականությունը թարգմանության խոչընդոտի պատճառով Եվրոպայում ավելի հայտնի է իր արձակով, քան պոեզիայով՝ Պուշկին, Լեմոնտով, և նույն ժամանակ ավելացրեց, որ այժմ, երբ Ռուսաստանի ազդեցությունը մեծ է Եվրոպայում, և աշխարհը հետաքրքրվում է Ռուսաստանով, ապա ուզում են իմանալ, ինչպիսին է ռուսը: Սկսել են մեծ թվով հետաքրքրվել Պուշկինով, սկսել են թարգմանել նրան:

Ես նկատեցի, այն համագամանքը, որ Իսահակյանին եվրոպական լեզուներով չեն թարգմանում իրենց մեծ պոետները, ակադեմիկոսը ևս ակասանք հայտնեց. «Այո՛, նրան մերոնք են թարգմանում, հայերը, այնինչ միայն մեծ բանաստեղծը պիտի թարգմանի, որ տվյալ ժողովուրդն իմանա Իսահակյանին, ինչպես բարբախտաբար Իսահակյանին ռուսերեն թարգմանել են Բլոկն ու Բրյուսովը, և նրանց համար նա եղել է սիրելի, մանավանդ Բլոկը հրաշալի է թարգմանել:

«Որո՞նք են Վարպետի լավագույն թարգմանությունները», - հարցրեց ինձ Զամազասպովիչը: Եվ ես ցույց տվեցի Լերմոնտովի՝ «Ես դուրս եմ ելնում մենակ ճանապարհ» բանաստեղծությունը Իսահակյանի թարգմանությամբ, որը տեղադրված էր Վարպետի երկերի երկրորդ հատորում: Զամազասպովիչը բարձրաձայն կարդաց այն, փորձելով ճիշտ արտաբերել հանգերի ներդաշնակությունը, վերջում երկի իմաստը կրկնեց, «սակայն ոչ երբեք ցուրտ քնով շիրմի», երբ ավարտեց ընթերցումը՝ ասաց. «Իսահակյանին շատ մոտ է եղել այս բանաստեղծությունը և անշուշտ այն ռեզոնանս է առաջացրել նրա հոգում»:

Ես ասացի, որ այդ բանաստեղծությունը Լերմոնտովը գրել է իր դուելից մի քանի շաբաթ առաջ, և Իսահակյանը ոչ թե մահապաշտության գաղափար է ջատագովում, այլ ապրելու կարոտ, կարոտ հարմոնիայի և սիրո: Զամազասպովիչը կրկին կարդաց վերջին քառյակը:

Գ. Զովմանը խոսք բացեց Իսահակյանի համաշխարհային նշանակության մասին, ասաց, որ երբ տոնում էին Թումանյանի 100-ամյակը, մի ռուս անվանի պրոֆեսոր հարցրել է նրան «Действительно он великий поэт?» «Նա իսկապես մեծ բանաստեղծ է», որովհետև կարող է և չի հասկանում նրա մեծությունը, այնինչ Իսահակյանը լայն արձագանք ունի աշխարհում, մի քանի տասնյակ լեզուներով թարգմանվել է «Աբու-Լալա Մահարի» պոեմը:

Վ. Զամազասպովիչը թե՛ «Պա իրոք այդպես է, Թումանյանն իմ կարծիքով դա մեր Նեկրասովն է, բայց տասն անգամ մեծ, բայց Նեկրասովը: Իսկ Իսահակյանի մոտ զարմանալի կերպով կա համաձուլվածք բանականի և մաքուր էմոցիայի ֆուլկլորի տարրերի: Ես նկատեցի, որ երբեք չեմ մոռանա նրա ելույթը Իսահակյանի 100-ամյակին՝ 1975 թ., 33 ԳԱ ակադեմիայի մեծ դահլիճում: Զամազասպովիչը ասաց, որ այդ խոսքը ինքը նախօրոք չէր գրել, սակայն ուներ մտքեր Իսահակյանի վերաբերյալ և պիտի արտահայտվեր: Զովմանը խնդրեց պրեզիդենտին, որ գրի առնի Իսահակյանի մասին իր խոսքը և կամ ծայրագրի մագնիտոֆոնի վրա: Ասաց, որ դա կանի անպայման և սիրով, սկզբում կգրեմ, հետո նաև կկարդամ:

Զովմանը հարցրեց, տեսել է ինքը արդյոք Վարպետի «Հիշատակարանը» գիրքը: Ասաց. «Այո՛, ստացել եմ Ավիկից»: Ես «Հիշատակարանը» նվիրել էի ակադեմիկոսին 1977 թ. մարտին, հետևյալ մակագրությամբ՝ «Մեծարգո Վիկտոր Զամազասպովիչ: Նվիրում եմ Ձեզ մի գիրք, ուր զարմանալի անկեղծությամբ արտացոլված է մեծ բանաստեղծի հոգին»: Եվ ունեցել էի կարծատև հանդիպում ակադեմիայում՝ պրեզիդենտի աշխատասենյակում:

Այա Զամազասպովիչը մեզ թեյ հյուրասիրեց: Թեյի սեղանին դրվեցին մոսկովյան կոնֆետներ և թխվածքաբլիթներ: Վիկտոր Զամազասպովիչը հարցրեց Զովմանին. «Իսկ ի՞նչ մեքենայով եք եկել»:

«Ավիկի «ժիգուլիով»: Ավիկն է քշում»:  
«Իսկապե՞ս, ուրեմն դու՞ք եք վարում: Ես ջախել տարիներին ունեի «Պոբեդա» մեքենա, սակայն հայրս՝ Զամազասպ Ասատուրովիչը չէր թողնում, որ ես մեքենա վարեմ – только через мой труп, - ասում էր նա շատ խիստ և ռուսերեն», հետո մի լավ ծիծաղեց: Ես մտածեցի. «Ի՞նչ պարզ և անկեղծ մարդ է մտքի այս հսկան»:

Վարպետը մեր այս տանը մի երկու անգամ իր

տիկնոջ հետ քնել է, հենց երկրորդ հարկում, որտեղ մենք ունենք հյուրասենյակ:

- Մեկ անգամ էլ, Վիկտոր Զամազասպովիչ, ես էլ նրանց հետ քնել եմ Ձեր այս տանը: Եվ հիշում եմ, ուշ երեկոյան ավելի շուտ գիշերով Դուք Վարպետի հետ գնացիք աստղադիտարան երկինքը դիտելու:

- Այո՛, այո՛, և գիտեք, Վարպետը շատ լավ էր ճանաչում աստղային երկինքը, գիտեր բավական աստղերի և համաստեղությունների դասավորվածքը, ամուսնեղը, ես զարմացած էի, նա ասում էր, որ երիտասարդ տարիներից հատուկ սեր է տածել տիեզերքի հանդեպ, այդպես է, և նրա պոեզիան ուղղված է դեպի հավերժությունը... Ապա շարունակեց. - Այո՛, Վարպետը սիրում էր Բյուրակյանը, ի դեպ, նա շատ հին բարեկամ էր հորս հետ, անհիշելի ժամանակներից... Եթե չեմ սխալվում, վերջին անգամ Վարպետը Բյուրակյան եկավ 1956 թվին տիկին Սոֆիայի հետ, ամուսնը, օգոստոսին, երկու թե երեք օր մնացին:

Թեյը խմված էր, բաժակները դատարկված: Եվ ես, համարձակություն առնելով, դիմեցի ակադեմիկոսին. - Վիկտոր Զամազասպովիչ, ես Ձեզ շատ եմ խնդրում, եթե դժվար չէ, գրեք Ձեր հուշերը Ավետիք Իսահակյանի մասին, չէ՞ որ Դուք բազում անգամ եք նրա հետ հանդիպել: Ձեր հայրիկն, ի դեպ, սիրել է հուշեր գրել, նա մեզ նվիրել է իր հուշերի գիրքը՝ երեք ստվար հատորով: Ես շատ եմ խնդրում Ձեզ:

- Գիտեք, որ ես իրապես շատ եմ հանդիպել Վարպետի հետ հենց մեր ակադեմիայի բացման օրվանից, որի առաջին կազմի անդամների թվում էր Վարպետը: Նաև ասեմ, որ հենց Վարպետն է ինձ ծանոթացրել մեր Վեհափառի՝ Վազգեն Առաքինի հետ, երբ նա դեռ չէր ընտրվել Վեհափառ, 1954 թվին, և նրանք միասին հյուր են եկել ինձ՝ Բյուրակյան: Այո՛, այո՛, ինչպես չէ... Մենք ոտքի էլանք, հրաժեշտ տալու ժամն էր: Եվ արդեն ոտքի վրա նա շուռ եկավ դեպի Զովմանը և շատ գործնական տոնով ասաց.

- Գրադարանը պետք է լավ աշխատի: Զովմանն էլ ասաց.

- Լավ կլինեմ, Վիտոր Զամազասպովիչ, որ ինձնից հետո գրադարանում Ավիկն աշխատի...

Եվ Զամազասպովիչը կրկին արտաբերեց իր ֆրազը.

- Գրադարանը պետք է լավ աշխատի: Ու՞մ էր ուղղված այդ խոսքը, ես այդպես էլ չհասկացա: Բայց ուղիղ մեկ ամիս անց Գուրգեն Զովմանին ազատեցին ակադեմիայի գրադարանի տնօրենի պարտականություններից:

Ավիկ ԻՍԱԶԱՍՊ

Այս ստորագրությունը դրվել է Զուլապատումի մախնական գրառումներն անելուց ուղիղ 42 տարի անց:

2 դեկտեմբերի, 2020 թ. Ա. Իսահակյան

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ. ՎԵՐԵԼՔԻ ՃԱՆԱԳԱՐՇԻՆ

**Լույս է տեսել «ՀՀ ԳԱԱ Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ 2006-2020 թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին» գիրքը՝ 480 էջ ծավալով, 2020 թ.: Այն կազմել է ՀՀ ԳԱԱ Քոթանյանի անվան ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Լարյոնյանը:**

Գրքում փորձ է արվել հասարակական և գիտական շրջանակներին ծանոթացնելու ՀՀ ԳԱԱ Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ 2006-2020 թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքներին և ինստիտուտի գիտական հրապարակումներին:

2020 թ. ծանր ու անկանխատեսելի իրադարձություններով լի տարի էր ոչ միայն պետության, այլև ինստիտուտի համար: Ինստիտուտի աշխատակիցները կարողացան արձանագրել գիտակազմակերպչական մի շարք նշանակալի հաջողություններ միջազգային հարթակներում՝ առաջին, ինստիտուտի կողմից ամեն տարի հրատարակվող «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով հոդվածների ժողովածուի խմբագրական խորհրդի կազմը ընդլայնվեց՝ ներառելով նաև միջազգային փորձագետների՝ Սերգեյ Դոխուլյանին Ռուսաստանից և Վիկտոր Զախարյանին Ավստրիայից: Երկրորդ, միջազգային

